

Ռազմավարական ծրագրեր

Արևի և քանու ուժով

Վարչապետ Կարեն Կարապետյանի մասնակցությամբ բացվել է մեր երկրում ամենամեծ՝ 1 ՄՎտ հզորությամբ «Թալին-1» արևային կայանը: 5-6 տարում կայանների հզորությունը կնոստենա 1 ԳՎտ-ի: Մի քանի տարի հետո կունենանք այնպիսի լուծումներ, որ նպատակահարմար կլինի էներգիան օգտագործել նաև գիշերը, էներգիա ստանալ տարվա բոլոր եղանակներին: Ընթացքի մեջ են քանու կայանների կառուցման ծրագրերը: Մինչև 2036 թիվը այլընտրանքային էներգիայի արտադրության զարգացման մոտ 150 սցենար կա:



N 42 (690)
10-16.11 2017

ISSN 1829-149X

9 771829 149003

911



ՀՀ ԱՐԵՎԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF EMERGENCY SITUATIONS OF RA
МИНИСТЕРСТВО ПО ЧРЕЗВЫЧАЙНЫМ СИТУАЦИЯМ РА

ՀՀ ԱՐԵՎԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԸ

Արևային էներգիա

ԱՌԿ ՄԱՍՆԱԿՈՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՎԱԿԱՐԳ

Այս տարվա ապրիլի վեցին ՀՀ կառավարությունը ընդունեց «Աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարություն»-ը և դրա իրականացման գործողությունների ծրագիրը: Ծրագրով սահմանված է, որ մինչև այս տարեվերջ պետք է մշակվի Աղետների ռիսկի կառավարման ոլորտում մասնավոր ներդրումների

ներգրավման հայեցակարգ: Հայեցակարգի մշակումն ավարտական փուլում է: «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլանֆորմ» ԱՌՆԱՊ, հիմնադրամի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արա Բարսեղյանից տեղեկացանք, որ փաստաթղթի մշակման աշխատանքային խմբում ներգրավ-

ված են մասնագետներ արտակարգ իրավիճակների նախարարությունից, ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայից, ԱՌՆԱՊ-ից, ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրերից, Համաշխարհային բանկից:

Շարունակությունը՝ էջ 2



ՀՀ ԱԻՆ ԲՅՈՒՋԵ-2018

Անցած շաբաթ ՀՀ ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում քննարկվում էր «ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագիծը: Արտակարգ իրավիճակների նախարարությանը հատկացումների չափերն ու ուղղությունները քննարկվեցին նոյեմբերի 3-ին Ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում: Ձեկուցողներն էին արտակարգ իրավիճակների նախարար Դավիթ Տոնոյանն ու ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Ասոմ Ջանջուղազյանը:

Ըստ կառավարության 2018-ին արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում ՀՀ կառավարության կողմից իրականացվող քա-

ղաքականությունը նպատակաուղղված է լինելու բնական և մարդածին աղետների ռիսկի նվազեցմանը, հնարավոր հետևանքների կանխարգելմանը և վերացմանը՝ համդիսանալով պետության անվտանգության ապահովման բաղկացուցիչ տարր, նպաստելու է երկրի կայուն զարգացմանը:

2018-ին ոլորտի հիմնական խնդիրներն են՝

- Փրկարար ծառայությունում փրկարարական համակարգի կատարելագործումը և զարգացումը՝ այն աստիճանաբար համապատասխանեցնելով ընդունված ժամանակակից պահանջներին, զուգահեռաբար պետական փրկարարական կառույցի շուրջ ձևավորելով կամավորական փրկարարական ուժեր:

- Փրկարար ծառայողների մասնագիտական, արագ արձագանքման փրկարար ուժերի պատրաստակամության բարձրացումը և տեխնիկական հագեցվածության ապահովումը, քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի քաղաքացիական պաշտպանության ուժերի ու ստորաբաժանումների խնդիրների առավել արդյունավետ դերաբաշխման և կառավարելիության բարձրացումը, սահմանամերձ բնակավայրերում փրկարարական և արագ արձագանքման այլ ուժերի ստեղծումը և զարգացումը:
- Սեյսմիկ պաշտպանության ոլորտում սեյսմիկ վտանգի գնահատման հուսալիությունը բարձրացնելու նպատակով սեյսմիկ պաշտպանության ազգային դիտա-


ցանցի արդիականացումը և թվայնացումը: Ծեփերի, շինությունների նախագծման, բնակավայրերի տարաբնակեցման և զարգացման ծրագրերում դրանց հնարավոր անվտանգ վայրի ընտրության և սեյսմիկ անվտանգության հաշվի առնելը:

- Հիդրոօդերևութաբանական ստորաբաժանումների, կայանների և դիտակետերի աշխատանքների ավտոմատացումը, թվայնացումը, դիտարկումների ծրագրային համակարգերը միջազգային չափանիշների մակարդակին և ՀՕԿ-ի (Համաշխարհային օդերևութաբանության կազմակերպություն) կողմից ընդունված ստանդարտներին մոտեցնելը, գործող սարքավորումների անխափան շահագործումը, որն իր հերթին հնարավորություն կտա բարելավել հիդրոօդերևութաբանական սպասարկման որակը:

Շարունակությունը՝ էջ 4

Կարևոր

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ. ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ



էջ 2

ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ ՎԱՐԺԱԼԶ



էջ 3

ԱՆԿՏԱԼԳ ՍՈՒՉՈՒՄ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁ



էջ 5

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍԵՆԹԱՑԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ



էջ 7



PPRD East 2

ԵՄ հովանավորությամբ իրականացվող «Տարերային և տեխնոստիկ աղետների կանխարգելում, պատրաստվածություն և արձագանքում Արևելյան գործընկերության երկրներում» (PPRD East 2) ծրագրի շրջանակներում նոյեմբերի 9-ին Երևանում անցկացվեց ՀՀ ԱԻՆ և քաղաքաշտապանության ու աղետների ռիսկի կառավարման ոլորտում շահագրգիռ այլ կառույցների ներկայացուցիչների ազգային խորհրդատվական խմբի չորրորդ համոթիպումը:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Հայ-ռուսական ճոր համաձայնագիր. ճանրամասներ

Արդեն տեղեկացրել ենք, որ հոկտեմբերի 24-ին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Դավիթ Տոնոյանը և ՌԴ Էկոլոգիական, տեխնոլոգիական և ատոմային վերահսկողության դաշնային ծառայության ղեկավար Ալեքսեյ Ալյոշինը ստորագրել են արտադրական անվտանգության կանոնակարգման ոլորտում համագործակցության մասին համաձայնագիր («911.Արտակարգ թերթ» համար 40՝ «Հայ-ռուսական չորս ճոր համաձայնագիր»):



Համաձայնագրով սահմանվել են արդյունաբերական անվտանգության կարգավորման բնագավառում Հայաստանի ու Ռուսաստանի համագործակցության հետևյալ ոլորտները. արդյունաբերական անվտանգության կարգավորման բնագավառում գործունեության լիցենզավորման, վերահսկողական գործունեության իրականացման, արդյունաբերական անվտանգության ոլորտում մասնագետների պատրաստման և որակավորման բնագավառներում փորձի փոխանակում: Սրան զուգահեռ փորձի փոխանակում կիրականացվի կոնկրետ աշխատանքների կատարման ընթացքում. արտադրական վտանգավոր օբյեկտների նախագծում, կառուցում, շահագործում, վերականգնում, հիմնանորոգում, տեխնիկական վերազինում, պահպանում և ապամոնտաժում, արտադրական վտանգավոր օբյեկտներում կիրառվող տեխնիկական սարքերի պատրաստում, տեղադրում, հարմարեցում, սպասարկում և նորոգում, արտադրական վտանգավոր օբյեկտներում վտանգավոր նյութերի փոխադրում, պայթեցման աշխատանքներ, ենթահողի օգտագործման հետ կապված աշխատանքներ, գերհնչման տակ աշխատող սարքավորումների շահագործում: Այս ամենի իրականացման ձևերն են. տեղեկությունների և փաստաթղթերի փոխանակում, համատեղ սեմինարներ, դասընթացներ, խորհրդակցություններ, փորձագետների փոխայցելություններ, համատեղ այլ նախագծեր: Համաձայնագիրը կգործի մինչև 2022 թվականը և ինքնաբերաբար կերկարաձգվի, եթե կողմերից մեկը փաստաթղթի գործողությունը դադարեցնելու մտադրություն չհայտնի: ■

Արամ ԶԱՔԱՐՅԱՆ

PPRD East 2

Շարունակական համագործակցություն



Նոյեմբերի 8-ին ՀՀ ԱԻ նախարար Դավիթ Տոնոյանը ընդունեց Եվրամիության «Տարերային և տեխնոստիկ աղետների կանխարգելում, պատրաստվածություն և արձագանքում Արևելյան տարածքում» PPRD East 2 ծրագրի ղեկավար Սերգեյ Անագոստիի գլխավորած պատվիրակությանը:



Յրուների զարգացման, ռիսկային գոտիների քարտեզագրման, աղետների մասին իրազեկվածության բարձրացման, տարածաշրջանային ռիսկերի էվեկտրոնային աստի համալրման, բնակչության պաշտպանության կամավորական շարժմանը վերաբերող բնագավառներում արված համատեղ աշխատանքի արդյունքները:

Հանդիպման ընթացքում քննարկվեց ծրագրի իրականացման ընթացքը Հայաստանում դիտարկելով այն որպես առաջնորդող նախաձեռնություն:

Ծրագրի շրջանակում իրականացվում է արտակարգ իրավիճակների ոլորտում ինստիտուցիոնալ և օրենսդրական բազաների բարելավում, Եվրամիության բնակչության պաշտպանության մեխանիզմի փորձի փոխանակում և կիրառում բնակչության պաշտպանության ոլորտում կարողությունների զարգացման նպատակով:

Կողմերը քննարկեցին նաև հեղեղումների ռիսկի կառավարման, աղետների ռիսկի գնահատման, ընդունող պետության Ազգային աջակցման համակարգի հնարավորու-

թի խոսքում ԱԻ նախարարն անդրադարձավ PPRD EAST-2 ծրագրի միջոցով Հայաստանում արտակարգ իրավիճակների ոլորտում Եվրամիության հետ համագործակցության հնարավորությունների ընդլայնմանն ու Հայաստանում ԵՄ փորձի կիրառմանը՝ շեշտելով փրկարարական կամավորական ուժերի ձևավորումը և աղետների կորուստների տվյալների գնահատումը (disaster data loss), ԵՄ փորձի կիրառմամբ, որպես բնակչության դիմակայունության բարձրացման կարևոր մեխանիզմ:

Կողմերը պատրաստակամություն հայտնեցին հետագայում էլ ապահովել համատեղ ծրագրերի իրականացման շարունակականությունը: ■

Աղբյուր՝ mes.am

ԱՇՆԱԿՅԻՆ ԾԱՌԱՏՈՒՆԿ

Նոյեմբերի 4-ին առաջին անգամ Հայաստանի գրեթե բոլոր մարզերում միաժամանակ կազմակերպվել է համապետական ծառատունկ:

Այդ օրը մեկնարկել է նաև «Եռաբլուր» զինվորական պանթեոնի տարածքի ծառապատման ճոր ծրագիրը: Պանթեոնում ավելացավ 2000 ծառ 5 հա տարածքի վրա: Մոտակա օրերին կծառապատվի և նույնքան տարածք: «Եռաբլուրում» հիշատակի իրենց տնկիներն են հողի մեջ դրել արտակարգ իրավիճակների, պաշտպանության նախարարությունների ղեկավար կազմը, փրկարարներ, զինվորականներ, ազատամարտիկներ, հասարակական կազմակերպություններ, պատանի երկրպագուներ ու դպրոցականներ:



Նույն օրը 150 ուսանողներ Նուբարաշենում թեղու փոքրիկ անտառ են հիմնել: Ծառատունկը տոնի վերածած լռեցիները 3 հա սոճու ու կաղնու տարածք են կանաչեցրել:

Սեպտեմբերին հրդեհված Բյուրակների անտառում և կազմակերպվել էր ծառատունկ, որին Ազգային ժողովի նախագահի հետ միասին մասնակցել են պատգամավորներ: Բյուրակներում էին նաև գյուղնախարարության աշխատակիցները՝ նախարարի գլխավորությամբ: Մոտ 1.5 հա տարածքում տնկվել է ավելի քան 1800 տնկանյութ՝ կաղնի, հացենի, կեչի:



Համապետական ծառատունկի նախաձեռնությունը գյուղնախարարությանն է, տնկիներն էլ տրամադրել է «Հայաստառոջ», առաջիկայում 5000 տնկանյութ էլ հատկացվելու է Երևանի քաղաքապետարանին: Տնկանյութ տրամադրել են նաև «Էյ-Թի-Փի» հիմնադրամը, անհատներ:

Աշնանային ճորատունկին առատ ջուր են հասցրել հրշեջ-փրկարարական մեքենաները:

Համապետական ծառատունկը կշարունակվի ամբողջ նոյեմբեր ամսվա ընթացքում:

Ծառերը տնկելով չեն սահմանափակվելու, «Հայաստառոջ» ու «Էյ-Թի-Փի»-ն նաև հետևելու են մինչև ծառերը կաչեն: Երիտասարդներին էլ կսովորեցնեն ինչպես խնամել ծառերը, պաշտպանել բնությունը: ■

ԱՌԿ. ՄԱՍՆԱԿՈՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Սկիզբը՝ էջ 1

Հայեցակարգը գրեթե պատրաստ է: Աշխատանքներն ընթացքի մեջ էին, երբ այս տարվա հոկտեմբերի 5-ին ՀՀ կառավարությունը ընդունեց պետական եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթերի մշակման, ներկայացման և հսկողության իրականացման մեթոդական հրահանգ: Հիմա հայեցակարգի նախագիծը համապատասխանեցվում է մշակած հրահանգով սահմանված չափանիշներին: Աղետների ռիսկի կառավարման ոլորտում մասնավոր ներդրումների ներգրավման հայեցակարգի նախագծի համաձայն, քայլերի ճիշտ հաջորդականությունը հետևյալն է. ռիսկի բացահայտում, ռիսկի նվազեցում, պատրաստվածություն, արձագանքում-վերականգնում-վերակառուցում,

ռիսկի ֆինանսավորում: Սա կարելի է անել տարբեր եղանակներով, օրինակ, հավատարմագրային կառավարման պայմանագիր կնքել և մասնավոր ընկերությունը դառնա կառավարման պատասխանատու, կամ վարձակալության պայմանագիր, երբ մասնավոր ընկերությունը վարձակալում է պետության ակտիվները և ծառայություններ մատուցում: Հայեցակարգով սահմանված են նաև այլ մոտեցումներ:

Փաստաթուղթը վերջնական տեսքի բերելուց հետո կուղարկվի շահագրգիռ պետական կառույցներին՝ տնտեսական զարգացման և ներդրումների, ֆինանսների նախարարություններ, որոնց կարծիքներն էլ ամբողջացնելուց հետո կներկայացվի կառավարության հաստատմանը: ■

Ա.Զ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

2017 թվականի նոյեմբերի 10-ին, ժամը 10-ին, տեղի կունենա ՀՀ ԱԻ նախարարության պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների առևտրի և պայթեցման աշխատանքների կատարման կանոնակարգի միտ (հասցե՝ Երևան, Դավիթաշեն 4, Ա. Սիկոյան փող. 109/8):

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

«Հունամիտար ակնագերծման և փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ներկայացրած հայտի քննարկում պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների առևտրի և պայթեցման աշխատանքների կատարման համար լիցենզիա տրամադրելու վերաբերյալ:

ՀՀ ԱԻ նախարարության պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների առևտրի և պայթեցման աշխատանքների կատարման լիցենզավորման հանձնաժողով



Ծրագիր

Եվրամիության «Քիմիական, կենսաբանական, միջուկային և ճառագայթային (ՔԿՆ/ՇԲՆ/ՇԲՆ) գերազանցությունների կենտրոնի» հովանավորությամբ 9 երկրում (Հայաստան, Վրաստան, Ուկրաինա, Մոլդովա, Սերբիա, Մակեդոնիա, Բոսնիա-Չերքեզովինա, Խորվաթիա) իրականացվում է քիմիական, կենսաբանական, ճառագայթային արձագանքման խմբերի ծավալվող ծրագիր: Ամեն երկրից վերապատրաստվում է մասնագետների մի խումբ, որն իր երկրում զբաղվելու է տեղացիների վերապատրաստմամբ:

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԴԱՇՏԱՅԻՆ ՎԱՐԺԱՆՔ

Արտակարգ համագործակցություն

Մեր թերթի նախորդ համարում տեղեկացրել ենք, որ նոյեմբերի 8-ին և 9-ին ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի Լուսակերտի ուսումնական կենտրոնում կանցկացվի «Հայաստանի-Վրաստանի արձագանքող ուժերի առաջին համատեղ ամոնիակի արտահոսքի դեպքում բնակչության և տարածքների պաշտպանության իրականացում» թեմայով դաշտային վարժանք:



Եվրամիության քիմիական, կենսաբանական, միջուկային և ճառագայթային (ՔԿՆ/ՇԲՆ) գերազանցությունների կենտրոնների 44-րդ ծրագրի շրջանակներում կազմակերպված վարժանքին ընդգրկված էին ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության արձագանքող 20 մարտիկներ, Վրաստանի ՆԳՆ արտակարգ իրավիճակների դեպարտամենտի քիմիական, կենսաբանական, միջուկային և ճառագայթային պատահարներին արձագանքող ստորաբաժանման 6 աշխատակիցներ, ինչպես նաև Եվրամիության վերոնշյալ կենտրոնների 3 դիտորդ-փորձագետները: Վարժանքին որպես տուժածներ մասնակցում էին նաև Ակադեմիայի 6 ուսանողներ:

Ուսումնավարժության նպատակներ էին. 1. ստուգել ՀՀ ԱԻՆ ստորաբաժանումների պատրաստակամությունը բնակչության պաշտպանության միջոցառումների կառավարման գործում, 2. կատարելագործել քիմիապես վտանգավոր նյութի արտահոսքի դեպքում ՀՀ ԱԻՆ ստորաբաժանումների բնակչության պաշտպանության համակարգի դեկլարացիայի համագործակցության կարգը, 3. կատարելագործել առաջին արձագանքող ուժերի միջև համագործակցության մակարդակը, 4. կատարելագործել արտակարգ իրավիճակներում Հայաստան-Վրաստան համագործակցությունը և առաջին արձագանքող ուժերի համագործակցությունը, ինչպես նաև Եվրամիության վերոնշյալ կենտրոնների 3 դիտորդ-փորձագետները: Վարժանքին որպես տուժածներ մասնակցում էին նաև Ակադեմիայի 6 ուսանողներ:

Ուսումնավարժության նպատակներ էին. 1. ստուգել ՀՀ ԱԻՆ ստորաբաժանումների պատրաստակամությունը բնակչության պաշտպանության միջոցառումների կառավարման գործում, 2. կատարելագործել քիմիապես վտանգավոր նյութի արտահոսքի դեպքում ՀՀ ԱԻՆ ստորաբաժանումների բնակչության պաշտպանության համակարգի դեկլարացիայի համագործակցության կարգը, 3. կատարելագործել առաջին արձագանքող ուժերի միջև համագործակցության մակարդակը, 4. կատարելագործել արտակարգ իրավիճակներում Հայաստան-Վրաստան համագործակցությունը և առաջին արձագանքող ուժերի համագործակցությունը, ինչպես նաև Եվրամիության վերոնշյալ կենտրոնների 3 դիտորդ-փորձագետները: Վարժանքին որպես տուժածներ մասնակցում էին նաև Ակադեմիայի 6 ուսանողներ:

Վթարի օջախում կային պայմանական տուժածներ: Երկաթուղային գլանատակառից տեղի է ունենում հեղուկ ամոնիակի ինտենսիվ գոլորշիացում և առաջանում է դեպի բնակելի թաղամասերն ամոնիակի առաջնային ու երկրորդային ամպերի տարածման սպառնալիք (ամոնիակը սուր հոտով անգույն գազ է, որը ջրում լուծվում է, իսկ գոլորշիներն օդի հետ առաջացնում են պայթուցանավտանգ խառնուրդներ):

Միազանգ ստանալուց հետո ՀՀ ԱԻՆ ՓՃ Լոռու մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի օպերատիվ հեթապահը տալիս է քիմիական տագնապ ազդանշանը: Վարժանքի մասնակիցներն իրականացրեցին հետախուզություն, ապա՝ որոնողափրկարարական աշխատանքներ, տուժածների բուժօգնության ապահովում, բնապահպանական միջոցառումների կազմակերպում, ուժեղ ներգործող թունավոր նյութերի տարածման կանխարգելիչ միջոցառումներ և վթարավերականգնողական աշխատանքներ: Հայկական և վրացական արձագանքող ուժերը համատեղ վթարավերականգնողական աշխատանքներ կատարեցին արտահոսքի դեպքում ՀՀ ԱԻՆ ստորաբաժանումների բնակչության պաշտպանության միջոցառումների կառավարման գործում, 2. կատարելագործել քիմիապես վտանգավոր նյութի արտահոսքի դեպքում ՀՀ ԱԻՆ ստորաբաժանումների բնակչության պաշտպանության համակարգի դեկլարացիայի համագործակցության կարգը, 3. կատարելագործել առաջին արձագանքող ուժերի միջև համագործակցության մակարդակը, 4. կատարելագործել արտակարգ իրավիճակներում Հայաստան-Վրաստան համագործակցությունը և առաջին արձագանքող ուժերի համագործակցությունը, ինչպես նաև Եվրամիության վերոնշյալ կենտրոնների 3 դիտորդ-փորձագետները: Վարժանքին որպես տուժածներ մասնակցում էին նաև Ակադեմիայի 6 ուսանողներ:



նումներ և վթարավերականգնողական աշխատանքներ: Հայկական և վրացական արձագանքող ուժերը համատեղ վթարավերականգնողական, ուժեղ ներգործող թունավոր նյութերի տարածման կանխարգելիչ միջոցառումների և հարակից տարածքում գտնվող բնակչության անվտանգության ապահովման հետո զեկուցեցին ձեռնարկված միջոցառումների մասին և հայտարարվեց վարժանքի ավարտ:

Միջոցառումն ամփոփելիս ևս մեկ անգամ ընդգծվեց, որ մնացած միջոցառումները պատրաստվածությունը բարձրացնելու և փոխգործակցությունը համակարգելու լավ հնարավորություն են ընձեռնում:

Աղբյուր՝ mes.am

Հ. Գ. Վարժանքի արդյունքների մասին՝ մեր թերթի հաջորդ համարում:

«ՎԱՆԱԶՈՐ ՔԻՄՊՐՈՍ». ԱՐԱԶԱՆԳԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Քիմգործարանում տախիդ ամոնիակի տաշարը ԱԻՆ-ի հսկողության տակ է

Նոյեմբերի 8-ին «Հայկական ժամանակ» օրաթերթի առջանց համարում հրատարակվեց «Վանաձորի գլխին կախված 94 տ ունեւրը ամեն պահի կարող է պայթել. ահազանգ» վերտառությամբ հոդվածը, որը խուճապի ալիք բարձրացրեց մեդիայում և բնակչության շրջանում:



Հեղինակն անդրադարձել էր լուծարված «Վանաձոր Քիմպրոս» ընկերության գործարանին, որում առկա է ամոնիակի մեծ քանակություն՝ մոտ 94 տ հեղուկ ամոնիակ և մոտ 4,25 տ ամոնիակաջուր: Նշվում է, որ ժամանակի ընթացքում ամոնիակի պահպանման բաքերը, խողովակները և սարքավորումները քայքայվել են, վթարային ազդանշանի համակարգը չի գործում: Գործարանում պահպանություն չի իրականացվում և հայտնի չէ՝ ինչ հետևանքներ կարող են լինել: Հղում է կատարվում նաև 2012-ի հունվարի 12-ին գործարանի գազի արտադրամասում ամոնիակի տարայի պայթյունի դեպքին, որի հետևանքով զոհվել էր ապարա-

տավարը, իսկ 3 աշխատակից ստացել տարբեր աստիճանի վնասվածքներ: Հարցի առնչությամբ պարզաբանում ստացանք Լոռու մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Կարեն Հովհաննիսյանից: Վերջինս վստահեցրեց, որ անհանգստության կարիք չկա. մարզային փրկարարները «Վանաձոր Քիմպրոսում» պարբերաբար հսկողություն են իրականացնում: «Խորհրդային ժամանակներից գործարանը, տեղակայված լինելով Վանաձորի բնակելի հատվածից մոտ 800 մ հեռավորության վրա, քիմիական վտանգավոր օբյեկտ է համարվում: Մենք գործարանում հնարավոր վթարի դեպքում բնակչության պաշտպանության գործուն պլան ունենք: Հնարավոր է, որ տարիների ընթացքում բաքերում կոռո-

զիոն երևույթներ նկատվեն: Վերջին հետախուզության արդյունքում ամոնիակի արտահոսք չի գրանցվել, տարրանները հուսալի վիճակում են»,- ասաց վարչության պետը:

Ներկա դրությամբ գործարանում միայն պահակներն են աշխատում: Դեպքի մասին տեղեկացվել են նախկին սեփականատերն ու սնանկության կառավարիչը, առաջարկվել է վտանգավոր քիմիական նյութերը տեղափոխել անվտանգ վայր: Կարեն Հովհաննիսյանի խոսքով՝ խնդրի հնարավոր լուծումներից իրատեսական է Երևանի «Մաքուր երկաթ» գործարանին վաճառել առկա ամոնիակի պաշարը: Կարևոր է նաև քիմգործարանում վթարի դեպքում ահազանգի համակարգի պահպանումը, ինչը թույլ կտա նվազեցնել վտանգը:

ՀՀ ԱԻՆ բնակչության պաշտպանության աղետների հետևանքների վերացման կազմակերպման վարչության տեխնածին վթարների բաժնի պետ, փ/ծ գնդապետ Կա-

րապետ Կարապետյանը հավելեց՝ հարցը բազմիցս բարձրացվել է շահագրգիռ նախարարությունների շրջանում: Դեռ 2013-ին, երբ գործարանը կոմունալ ծառայությունների դիմաց միլիարդների պարտքեր էր կուտակել, արտակարգ իրավիճակների նախարարության միջնորդությամբ պահպանվել են էներգամատակարարումն ու ջրամատակարարումը, որպեսզի գործարանը կարողանա նվազագույն անվտանգության ապահովման միջոցառումներ իրականացնել:

Առաջիկա օրերին նախատեսվում է հանդիպում «Մաքուր երկաթ» ընկերության և «Վանաձոր Քիմպրոս»-ի սնանկության կառավարչի միջև ամոնիակի վաճառքի շուրջ բանակցությունների նպատակով: Հարցին արդյոք վտանգավոր քիմիական թափոնի տեղափոխման համար հատուկ տեխնիկա հարկավոր չէ, գնդապետը պատասխանում է՝ խնդիրը բարդ է, բայց լուծելի: Աստիճանական գոլորշիացման եղանակով ամոնիակի չեզոքացումը ծայրահեղ որոշում է:

Նորություններին կանդրադառնանք առաջիկայում:

ԱճԻ ԱՏՈՆՅԱՆ



Գետերի և լճերի երկիրը

Հայաստանը համեմատաբար հարուստ է ջրային պաշարներով: Այստեղ կան մոտ 9480 գետեր, որոնցից 379-ը ունեն 10 կմ-ից ավելի երկարություն, և 100-ից ավելի լճեր, որոնց մի մասը չորանում է ամռանը: Դարեր շարունակ Հայաստանը կոչվել է «գետերի և լճերի երկիր»: Երկրի տարածքի 4,7%-ը կազմում է ջուրը:

2017. ԶՐԱՍԱԿԱԿ ՏԱՐԻ

Կլիմայական փոփոխություններ, գետերի հոսքերը դադարեցել են

Ըստ կլիմայական երկարաժամկետ կանխատեսումների՝ գարնան և ամռան ամիսները կշարունակեն անցնել բարձր ջերմաստիճանի և սակավ տեղումների պայմաններում: Եվ պատահական չէ, որ Հայաստանում վերջին տարիներն աչքի են ընկնում ջրասակավությամբ. մասնագետներն այն պայմանավորում են կլիմայական փոփոխություններով:

2002-2011 թվականներն ընկած ժամանակահատվածը (բացառությամբ 2008-ի) համեմատաբար կարելի էր ջրառատ համարել: 2011-ից մինչև օրս իրար են հաջորդում ջրասակավ տարիները:

Պատկերը մտահոգիչ էր հատկապես 2014-ին, երբ հանրապետությունում ձմեռային ու գարնանային տեղումների սակավության պատճառով ջրային ռեսուրսների նորմայից 3 անգամ քիչ ցուցանիշ էր գրանցվել, որը լուրջ խնդիրներ էր առաջացրել երկրում: «2011-2017 թվականներին որոշ չափով ջրառատ էր 2016 թվականը: Իսկ ընթացիկ տարին բավական սակավաջուր էր: Նոյեմբերի 3-ի դրությամբ՝ գետերի մեծամասնությունում, այդ թվում նաև կարևորագույն մշակութային Հրազդան ու Ախուրյան գետերի հոսքերը կազմում են տարեկան նորմայի 50-80 տոկոսը»,- նշեց «Հիդրոտեխնոլոգիայի և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ Լևոն Ազիզյանը: Նրա խոսքով՝ նախորդ տարվա



համեմատ՝ ընթացիկ տարին մոտ 20 տոկոսով ջրասակավ էր, այդ իսկ պատճառով ջրամբարներում տարեկան առավելագույն ջրալցվածության ցուցանիշները ցածր են եղել: Եթե 2016-ին Ախուրյանի, Ազատի ջրամբարներում 100 տոկոս ջրալցվածություն է գրանցվել, ապա այս տարի՝ 85 տոկոս, Արփի լճի ջրամբարում ջրալցվածությունը 62 տոկոս է կազմել՝ նախորդ տարվա 65 տոկոսի դիմաց, իսկ Մարմարիկում 90 տոկոս՝ 83 տոկոսի դիմաց: Այս տարի ամենացածր ցուցանիշը գրանցվել է Ապարանի ջրամբարում: 91 մլն խմ ջրատարողությամբ ջրամբարը լցվել է ընդամենը 49 տոկոսով, իսկ անցած տա-

րի ջրալցվածությունը կազմել էր 60 տոկոս: 2016-ին ջրամբարներում գրանցված առավելագույն ջրալցվածությունը նպաստեցին նաև ապրիլ-մայիս ամիսներին տեղացած ցիկլոնային բնույթի անձրևները:

Լևոն Ազիզյանի փոխանցմամբ՝ ընթացիկ տարում ջրային պաշարների պակասի պատճառով ջրամբարներից ու Սևանա լճից ջրառը մոտ մեկ ամիս շուտ է սկսվել մայիսի 7-ից:

Այս տարի Սևանից 266 757 մլն խմ ջուր է բաց թողնվել, ինչը նախորդ տարվա ցուցանիշից մոտ 100 մլն խմ-ով ավելի է: Եթե 2016-ին Սևանա լճի մակարդակը բարձ-

րացել էր 27 սմ-ով, ապա այս տարի, հիդրոտեխնոլոգիայի պայմաններից ելնելով, Սևանի ջրի մակարդակը ոչ թե կբարձրանա, այլ կնվազի մոտ 3 սմ-ով:

«Այս տարի ապրիլ-հունիս ամիսներին նորմայից ցածր տեղումներ են գրանցվել (ապրիլին՝ 40-80 տոկոս, մայիսին՝ 70-90 տոկոս), որոնք մեծամասամբ ներգանգվածային բնույթի էին և գետերի հոսքերի ձևավորման վրա էական ազդեցություն չեն թողել: Հոսքագոյացման շրջաններում 2000 մ և բարձրադիր գոտիներում առկա ձնածածկույթը նույնպես նորմայից ցածր է եղել: 2017-ին կանխատեսված 80-100 տոկոս ցուցանիշի փոխարեն՝ գե-

տերի հոսքերը կազմեցին 50-80 տոկոս, նույնիսկ Սևանից հավելյալ ջրառի անհրաժեշտություն եղավ»,- տեղեկացրեց Լևոն Ազիզյանը և հավաստիացրեց, որ ջրառը եղել է լճի ակտիվ ջրատվության սահմաններում (230-270 մլն խմ) պահպանելով Սևանի դարավոր պաշարները:

Իսկ թե ինչպիսին կլինի այս ձմեռը, պարզ կլինի շուտով: Ձմեռային տեղումների վերաբերյալ սեզոնային եռամսյակային կանխատեսումների ընդհանուր պատկերը կլինի նոյեմբերի երրորդ տասնօրյակում:

Սերի ՍՈՂՈՍՈՆՅԱՆ

Սկիզբը՝ էջ 1

- Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայության ռադիոլոգիայի ցանցի արդիականացումը, հակակարկտային հրթիռային համակարգի ներդրումը՝ կարկտահարություններից գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների, այգիների պաշտպանության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

- Ծզնաժամային կառավարման պետական ակադեմիայի առկա հնարավորությունները զարգացնելը՝ դարձնելով այն արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության մասնագետների պատրաստման ու վերապատրաստման կենտրոն: «Ծզնաժամային կառավարման պետական ակադեմիան հավատարմագրվել է, ուժային կառույցների բուհերից միակն է, որ հավատարմագրվել է, ինչը մշակակում է, որ էլ ավելի կբարձրանա կրթության մակարդակը, և ակադեմիան կտա որակյալ կադրեր ոչ միայն ԱԻ համակարգի, այլ նաև՝ ուժային այլ կառույցների համար»,- արձանագրեց Դավիթ Տոնոյանը:

- Ծզնաժամային կառավարման ազգային կենտրոնում մարդուն հրատապ օգնության համապետական համակարգի «911» դիսպետչերական ծառայության զարգացումը՝ ծառայության մատուցումը հնարավորինս մոտեցնելով միջազգային չափանիշներին: Իրավիճակների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվության հավաքման, մշակման, վերլուծու-

ԲՅՈՒԳԵ - 2018

Հաճախարգը կզարգանա արհեստավարժ ծառայության և միջազգային համագործակցության շնորհիվ

թյան և առաջարկությունների մատչապատրաստման համակարգի կատարելագործումը:

- ՀՀ կառավարության կողմից հաստատված պետական պահուստի համակարգի զարգացման և բարեփոխումների հայեցակարգի դրույթների իրականացումը, նյութական արժեքների կուտակումը, թարմացումը, փոխարինումը և պահպանումը: Այս ոլորտում նոր քաղաքականության մշակումը ընդգրկելով մասնավոր սեկտորի հնարավորություններն ու կարողությունները:

- Աղետների ռիսկի վերաբերյալ տվյալների հավաքագրման, վերլուծության, համայնքներում աղետների ռիսկի բացահայտման և զննհատման համակարգի փուլային ներդրումը, սողանքային աղետի կառավարման միասնական համակարգի փորձնական ներդրումը:

Այս նպատակներին հասնելու համար կառավարությունն առաջարկում է 2018 թվականին ՀՀ արտակարգ իրավիճակների մատչապատրաստմանը տալ մոտ 11 մլրդ դրամ, որի գերակշիռ մասը՝ 7,43 մլրդ դրամ, փրկարար ծառայությանը: Նախարարության այլ ստորաբաժանումներին տրամադրվող գումարները.

Հիդրոտեխնոլոգիայի և մթնոլորտային երևույթների վրա



ակտիվ ներգործության ծառայություն 1,07 մլրդ,

Սեյսմիկ պաշտպանության ծառայություն՝ 733 մլն,

Արտակարգ իրավիճակներում բուժօգնության ծառայություններ՝ 18,7 մլն,

Նյութական ռեսուրսների պետական պահուստի ձևավորում՝ 25,963 մլն,

Կարգերի վերապատրաստում՝ 120,581 մլն,

Այլ պետությունների ԲՈՒՀ-եր գործողված փրկարարների ուսուցում՝ 14 մլն,

Պետական աջակցություն հայրենական մարդասիրական արձագանքման կենտրոնին՝ 7,721 մլն,

Տեխնիկական անվտանգության ծառայություններ՝ 38 մլն դրամ:

Թեև տեխնիկական անվտանգության ծառայությունների շուկան ազատականացված է, և գործում են մի շարք ընկերություններ, ՀՀ ԱԻՆ տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը հազեցած է ժամանակակից տեխնիկական միջոցներով, շարժական լաբորատորիա ունի և կարողանում է ձեռնարկատիրական գործունեությունից տարեկան մոտ 600 մլն դրամ ստանալ:

Ընդհանուր առմամբ, ըստ մատչելի, 2018-ին ԱԻՆ կտրամադրվի 185 մլն դրամով քիչ գումար, քան՝ 2017-ին: Սա խնդիր-

ներ չի հարուցի, համակարգը կզարգանա արհեստավարժ ծառայության և միջազգային համագործակցության շնորհիվ, Ազգային ժողովում հայտարարեց Դավիթ Տոնոյանը: Ըստ նրա՝ համակարգում տնտեսումների և կենտրոնական ապարատում կրճատումների արդյունքում սահմանված 10 համայնքում ձևավորվել և կախավորվել են քաղաքացիական պաշտպանության հեռակետեր: Նույն ժամանակահատվածում էր 12 հեռակետ կկառուցվի 2018-ին: Կրճատումները խնդիրներ չեն ստեղծելու, նախարարության գործառնությունների վրա բացասական ազդեցություն չեն ունենալու, կարողությունների զարգացման և տեխնիկական արդիականացման ծրագրերը կյանքի կկոչվեն երկրորդ և միջազգային համագործակցության ծրագրերով: «Վստահեցնում են, որ հաստատական ենք՝ իրականացնելու կառավարության բոլոր ծրագրերը մեզ վստահված ոլորտում: Այս պահի մեր տեխնիկական հազեցվածությունը հաշվի առնելով՝ ասեն, որ 2018-2019 թվականներին խնդիրներ չեն առաջանալու: Անհանգստանալու առիթ չեն տեսնում»,- ամփոփեց Դավիթ Տոնոյանը:

Արամ ԶԱՔԱՐՅԱՆ



Վերադարձ անցած ուղում

Վետերան փրկարարը հաճախ է գնում հրշեջ-մաս, օգնում և փորձը փոխանցում, եթե դրա կարիքը կա: Հրդեհ-պատահարների ժամանակ գնում է, հետաքրքրվում, թե ինչ եղավ, ինչպես ավարտվեց: Այդպես է լինելու, քանի դեռ ապրում է, անկախ այն հանգամանքից՝ տանն է, թե՛ հրշեջ-մասում:

ՎԵՏԵՐԱՆ ՓՐԿԱՐԱՐԸ

Պատրաստ՝ ցանկացած առաջադրանքի

Մասիս քաղաքի հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատարի նախկին տեղակալ Աղասի Հովհաննիսյանը, խոսքի սովորական ընթացքը հանկարծ ընդհատելով, զվարթ երանգով ասում է. «Եթե կյանքս նորից սկսեի, նույն ճանապարհը կանցնեի»: Իսկ այդ ճանապարհը, որն առանձնահատուկ ոգևորությամբ նշում ենք որպես հրշեջ-փրկարարի ուղի, վետերանը սկսել է, երբ դեռ 17 տարեկան պատանի էր, և այն ամբողջացնելու համար նվիրել է ուղիղ 40 տարի:



Վետերան փրկարար Աղասի Հովհաննիսյանը

Աղասի Հովհաննիսյանը, ավարտելով Մասիս քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցը, անմիջապես աշխատանքի է անցնում Մասիսի հրշեջ-մասնագիտացված թիվ 28 խմբում՝ որպես հրշեջ: Հաջորդ տարի գորակազմում է խորհրդային բանակ, ծառայում հակաօդային ուժերում. «Եղել եմ դասակի հրամանատարի տեղակալ, գորացրվելուց հետո ստացել եմ կրտսեր լեյտենանտի կոչում և շարունակել աշխատանքս հրշեջ-մասում»: Աշխատանքին զուգահեռ հեռակա սովորել է Պերմի շինարարական տեխնիկումում: Աղասի Հովհաննիսյանը 1987-ին արդեն հրահանգիչ էր, իսկ մեկ տարի անց՝ խմբի պետ: «Վեց տարի անց տեսչությունն ու խումբը միացնելուց հետո նշանակվեցի պետի տեղակալ: 2003-ի հունիսի 4-ից ավագ լեյտենանտի զինվորական կոչումով ծառայել եմ արտակարգ իրավիճակներում, իսկ թոշակի եմ անցել 2016-ի ապրիլի 18-ին մայրի կոչումով»,- ասում է 58-ամյա փ/ծ մայր վետերանը:

Վետերան փրկարարի կին լինելը, ես իր հետ՝ պատահած ամեն մի արտակարգ դեպքով ապրումներն ունեցել եմ: Մտահոգվել եմ և՛ իր, և՛ պատահարից տուժած մարդկանց համար, հատկապես, երբ դրանք երիտասարդներ էին:

Աղասի Հովհաննիսյանի մեծ դուստրը՝ Լուսինեն, գեղանկարիչ է: Իր կտավները ստորագրում է Սուլո անունով: Դուստրը բնակվում է Ֆրանսիայում և շարունակում ստեղծագործել: Ցուցահանդեսներով ներկայացել է Իտալիայում, Իսրայելում, Ֆրանսիայում, Ճապոնում և շարունակում: Որդին Ավանը, ծառայում է ոստիկանության համակարգում, իսկ մինչ այդ 5 տարի անցել է հրշեջ-փրկարարի ճանապարհով: Կրտսեր դուստրը՝ Արմինեն, ավարտելով Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտը՝ աշխատում է օդանավակայանում: Երբ 1976-ին նոր քաղաք դարձած Մասիսում ձևավորվում է հրշեջ-մասնագիտացված խումբ, հայրը՝ Արտավազը Հովհաննիսյանը, Մասիսի առաջին հրշեջներից էր:

«Արտակարգ դեպքերն էլ հետք են թողնում փրկարարի հոգում: Դժվար ապրումները հենց այնպես չեն անցնում, ազդեցություն են թողնում»,- ասում է Աղասի Հովհաննիսյանը:

հաննիսյանը և, այդուհանդերձ, նշում, որ սիրով է ծառայել: Համոզված է՝ հրշեջ-փրկարար լինելը բնավորություն է ու վարքագիծ, որ անբաժանելի է էությունից:

Վետերան փրկարարի ուղին անցել է շատ փորձություններով, հաղթահարել է դրանք, արժանացել պատվոգրերի ու պարգևների: Վստահեցնում է, որ նորից սիրով կծառայե՝ շարունակելով 4 տասնամյակ առաջ սկսածը, որ պահեստային կամ թոշակի անցած փրկարար չի լինում, հիմա էլ փրկարար է՝ պատրաստ ցանկացած առաջադրանքի: Այդ գիտակցումն է միշտ ուղեկցել իրեն և այդ համոզմունքով էլ նվիրված է ծառայությանը: «Հաճախ եմ գնում հրշեջ-մաս, օգնում և փորձս փոխանցում, եթե դրա կարիքը կա: Հրդեհ-պատահարների ժամանակ գնում եմ, հետաքրքրվում, թե ինչ եղավ, ինչպես ավարտվեց: Այդպես է լինելու, քանի դեռ ապրում եմ, անկախ այն հանգամանքից՝ տանն եմ, թե՛ հրշեջ-մասում»,- ասում է Մասիս քաղաքի հրշեջ փրկարարական ջոկատի հրամանատարի նախկին տեղակալ, փ/ծ մայր ու վետերան Աղասի Հովհաննիսյանը:

Ֆելիքս ԵՐԻԱԶԱՐՅԱՆ

Բուլղարահայ սուզորդ Կրիկոր Սրենցը ծնունդով Պլովդիվ քաղաքից է: Հոր օրինակին հետևելով՝ փոքրուց սկսել է դայվինգով զբաղվել: Եվրոպական CMAS, ամերիկյան IANTD և անգլիական BSAC ջրասուզակային կազմակերպությունների մարզիչներից է, համադրված և Բուլղարիայի ջրասուզակային գործունեության ազգային ասոցիացիան:

ԱՆՎՏԱՆԳ ՍՈՒԳՈՒՄ, ԱՆՎՏԱՆԳ ՎԵՐԱԴԱՐԶ

Մասնագիտական օգնություն Արցախի ջրափրկարարներին



Սուզումներ է կատարել Միջերկրական, Էգեյան, Կարմիր, Սև և Ադրիատիկ ծովերում: Անձնական ռեկորդը 100 մ է, թեպետ երբեմն ավելի մեծ խորություններ են գրանցվում: «Դրանք պարզապես թվեր են: Կարևորը ճիշտ սուզվելն է և անվտանգ ջրի մակերես վերադառնելը»,- նշում է միջազգային կարգի մասնագետը: 2016-ի ապրիլյան պատերազմից հետո բուլղարահայ սուզորդ Արմեն Կոչանյանի հետ որոշեցին Արցախ մեկնել՝ օգնություն ցուցաբերելու: Ի սկզբանե ծրագրել էին լողի դասեր կազմակերպել, սակայն Արտակարգ իրավիճակների պետական ծառայության արագ արձագանքման հատուկ ստորաբաժանման հրամանատար Մեխակ Արզումանյանի հետ ծանոթությունը շրջադարձային եղավ:



Հնորիվել էր 2-րդ կարգի հավաստագիր, որը թույլ է տալիս մինչև 40 մ խորության վրա փրկարարական աշխատանքներ կատարել: Հայաստանում անցկացրած օրերին մասնագետը գրուցել էր նաև տեղի ջրափրկարարների հետ, խնդիրները նույնն են: Առաջարկների փաթեթ է մշակել, որը կարող է երկու կողմին էլ օգտակար լինել. «Արտակարգ դեպքերում առնվազն երեք ջրափրկարար է պետք, երկուսը ջրում, մեկը ցամաքում. միայն այդպես կարելի է լիարժեք անվտանգություն ապահովել: Արցախի ջրակառք երկու հոգու համար նախատեսված հանդերձանք ուներ, ես ևս մեկը նվիրեցի: Ընդհանուր առմամբ սարքավորումների և հանդերձանքի պարագաների պակաս կարևորագույնը, լաստեր, լապտերներ, շնչադիմակով շարժական թթվածնային ապարատ, որը պետք է սուզորդի անբաժան մասը լինի թե՛ արձագանքման, թե՛ պարապմունքների ժամանակ»:

Արզումանյանը կարևորում է Կրիկոր Սրենցի ներդրումը. վերջինս ջրկատին ջրային լապտերներ, կողմնացույց, ձեռնոցներ և սաղավարտներ է նվիրել: «Նրա շնորհիվ ջրային համակարգիչ ունենք, որը ցույց է տալիս ջրի ջերմաստիճանը, խորության և թթվածնի քանակի հարաբերակցությունը և, ամենակարևորը, ջրում մնալու ճշգրիտ ժամանակը՝ վնասվածքներից խուսափելու համար: Մեզինց շատերը 10-15 տարվա փորձ ունեն, սակայն այս ձևաչափով դասընթաց առաջին անգամ էինք անցնում: Ցանկալի է՝ դրանք շարունակական լինեն»,- ամփոփում է հրամանատարը:

ԱճԻ ԱՆՏՈՆՅԱՆ



Արտակարգ ժամանակներ

Այսօր հասարակությունն ավելի շատ տեղ է տալիս կատարողներին, քան ստեղծագործողներին: Քանդակը զվարճանք է, ինչպես փոփ երաժշտությունն ու կինոն: Այն քրոնոթյան պես մի բան է, որը հասանելի է փոքրաթիվ մասսայի: Վախենանք՝ կգա ժամանակ, երբ մարդիկ ընդհանրապես չեն հասկանա բարձր արվեստը, այն կանհետանա հեթանոսական գրեթե նման: Կրթությունն է միակ փրկությունը:

«... Անձրևանոցը հրաշալի տուն է, շատ հարմարավետ երկուսի համար: Ճիշտ է, այն պատեր չունի, բայց փոխարենը բավական է ձեռքը երկարել, և դուք կհամարաք, թե դուք տարվա որ եղանակն է՝ օրինակ, անցե՛ք է գարունը, թե դեռ շարունակվում է... Այժմ, շատ տարիներ անց, աղջիկը վերջապես հասկացել էր, թե դա ի՞նչ հրաշալի անձրևանոց էր՝ մի փոքրիկ պարաշյուտ, որից բռնվելով երկուսով, կարելի է թռչել-զնալ հեռու-հեռու», հատկապես անձրևոտ օրերին... Եվ նա թախծում է իր արդեն երեք սենյականոց բնակարանում, որովհետև ինչքան մեծ է բնակարանը, այնքան հեռու են իրարից նրանք, ովքեր ապրում են այնտեղ...»:

Հատված Լեոնիդ Ենգիբարյանի «Անձրևանոցը» նովելից

«Արվեստանոցային» խտիեր

Ծննդավայր Ստեփանակերտն է: Ավարտել են Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի քանդակի բաժինը, ուսումնառությունն ավարտելով Լեհաստանի Կոլեգիում Պոլոնիկում համալսարանի բանասիրության ֆակուլտետում: Հայրս Արմեն Հակոբյանն էլ էր քանդակագործ: «Արցախ»-ը, «Սուրբ-գայիթ»-ը, «Ղարաբաղյան տրանսպորտ»-ը, «Թագերի ծերունիներ», «Համբարները» և շատ այլ քանդակներ նրա արարածն են: Պոլոնի, երբ հայրս գրկից: Արցախյան շարժման մասնակից էր, «Կռուկներ» կոմիտեի հիմնադիրներից: Շիտակ մարդ էր, հայրենասիրությունն իր համար ժամանակի թելադրանք էր, այլ՝ հոգու կանչ, գիտակցված ընտրություն:

Իր գոյությունը նա մատնանշեց իմ ուղին: Պատերազմի տարիներին հորս արվեստանոցում ապակիներ չկային, դուռն էլ փայտյա էր: Արտաքինից ներկել են, փոխել դուռը, ներսում դեռ նրա շունն է և ու տրամադրությունը:

Ես ու հայրս նման չենք, մեզ տարբեր մշակութային ժամանակներ են բաժին ընկել: Թերևս նույնն է կապը նյութի հետ: Ամեն նյութ իր լեզուն ունի, սահմանը, ինչպես մարդը, որը կարող է արարել միայն իր ապրած փորձի շրջանակում: Հնարավոր չէ քարը «կռել» երևակայությամբ: Երևակայությունն անսահման է, քարը՝ կոնկրետ, իսկ կոնկրետացումը միշտ աղբատեղում է միտքը: Քար, բրոնզ թե փայտ՝ տարբեր է քանդակի արարման

ԽՈՍՈՂ ՔԱՆԴԱԿՆԵՐ

Զրույց քանդակագործ, անհմատոր Սիիրան Հակոբյանի հետ




ճանապարհը: Լավ արվեստագետը նա է, որն իր զգացածը փոխանցում է քանդակին՝ գրույցի միջոցով: Առանց գրույց չկա քանդակագործություն. դա լուռ, տիեզերական շփում է:

Արվեստի օգնությամբ գոյություն ունեցող բոլոր սահմանները հատելի են: Այն ամենն, ինչ ինձ հետաքրքրում է կյանքում, դառնում է նաև ստեղծագործելու թեմա: Երբեմն մտածում եմ արդյո՞ք կշարունակեի քանդակել, եթե օրերից մի օր անմարդաբնակ կղզում հայտնվեի: Պատասխանս բոլոր պարագաներում մեկն է. քանդակագործությունը ներքին պահանջ է:

Այսօր հասարակությունն ավելի շատ տեղ է տալիս կատարողներին, քան ստեղծագործողներին: Քանդակը զվարճանք է, ինչպես փոփ երաժշտությունն ու կինոն: Այն քրոնոթյան պես մի բան է, որը հասանելի է փոքրաթիվ մասսայի: Վախենամ՝ կգա ժամանակ, երբ մարդիկ ընդհանրապես չեն հասկանա բարձր արվեստը, այն կանհետանա հեթանոսական գրեթե նման: Կրթությունն է միակ փրկությունը:

Ընդհանուր առմամբ աշխարհում արվեստի հանդեպ համատարած անտարբերություն կա: Փոքրիկ Հայաստանում կերպարվեստն ավելի բարձր մակարդակում է, քան մյուս երկրներում: Կուզեի իմ արվեստով փո-



խել մարդկանց գիտակցությունը, նրանց ավելի կամեցող դարձնել: Ցավոք, հեշտ չէ: Անհայտ մեկը երբեք միջազգային հարթակներում չի ցուցադրվում. ինչ արած, քաղաքակրթություն է:

Վիքիպեդիան՝ առանց սահմանների

2014-ին Սլուբիցե քաղաքի Կոլեգիում Պոլոնիկում համալսարանի ռեկտոր Քիշտոնի Վոյչեխովսկու առաջարկով գծեցի Վիքիպեդիա ազատ հանրագիտարանին նվիրված հուշարձանի միակ էսքիզը՝ 1,7 մետրանոց լամինատե քանդակ, որում չորս տղամարդ գլխավերևում են պահում խորհրդանշական անավարտ գլոբուսը: Գեներալային խնդիր չկար, սակայն կոմպոզիցիոն առումով հակասություն էր պետք: Այդպիսով վերափոխեցի քանդակը երկու կնոջ և երկու տղամարդու կերպարով:

Նախագիծը ֆինանսավորեց քաղաքապետարանը: Տեղադրվելու բողոքում էին արդյոք տեղից է մոտ 12 հար եվրո ծախսել քանդակի վրա, այն դեպքում, երբ շենքերի տանիքները կաթում են:

Վոյչեխովսկու համար այս ամենը փիլիսոփայություն էր, հայրենասիրական մոտիվ, քանի որ լեի խմբագիրներն այն ժա-

մանակ հողվածների քանակով երրորդ տեղում էին:

Հուշարձանին հարյուրավոր լրատվամիջոցներ անդրադարձան: Թեև ինֆորմացիոն ազատության պատճառով Վիքիպեդիան թերի է, սակայն այն միակ գործիքն է, որ գիտություն է տարածում առանց կրոնական, ռասայական կամ մշակութային խտրականության:

Արվեստը՝ նոր կյանքի սկիզբ

Անհմացիան միշտ հետաքրքրել է ինձ: Սովետական և Դիսնեյի մուլտֆիլմերը մինչ օրս հաճույքով են դիտում: Երազում էի, որ քանդակներս շարժվեն:

Անհմացիան կենդանացնում է այն, ինչ դրել են քանդակի մեջ: Գուցեն ու հստակ շարժումները երկրորդական են, միտքն է կարևոր:

Տանը մի գիրք ունեի՝ Լեոնիդ Ենգիբարյանի նովելները: Ենգիբարյանն ապրում էր իմ մեջ: Տարիներ առաջ «Անձրևանոցը» ֆիլմը Մոսկվայի Short Film Fund մրցույթում հանդիսատեսի մրցանակի արժանացավ: Այն նախատեսված էր թե՛ պրոֆեսիոնալ, թե՛ սիրողական կատեգորիաների համար: Համաձայնե՞ք՝ որքան հեշտությամբ ենք մեր օրերում կուլ գնում նյութական արժեքներին, որոնք իրապես արժեք չունեն: Ծիծաղելի է:

Մյուս անհմացիոն ֆիլմն «Ճանապարհ» է՝ գրված Դանթեի «Աստվածային կատակերգության» մոտիվներով: Երբ ավարտվում են անդրադարձյալն աշխարհի երկու տիրույթները՝ դժոխքն ու քավարանը, գալիս է վերջին կանգառը: Արվեստն է՝ դրախտի միակ ճանապարհը: Պաթետիկ է հնչում, բայց արվեստը հենք է հետագա արարման, կյանքի: Հայերս՝ պատերազմ տեսած այս ժողովուրդը, դրա ուժը լավ գիտենք: ■

Տեղեկանք

Սիիրան Հակոբյանը հեղինակ է «Սկիզբ», «Փոքրիկ», «Դիմաքանդակ», «Անհաղթ», «Ծաղիկներ» և այլ քանդակների, անհմացիոն ֆիլմերի:

Մասնակցել է միջազգային սիմպոզիումների:

ԱՆԻ ԱՆՏՈՆՅԱՆ
Կլոնկո-Երևան տեսականուրջ

ՉՍԵՌԱՅԻՆ ՏԱԲՈՒԹՅՈՒՆ

Բազմաբնակարանային շենքի արտաքին ջերմամեկուսացում իրականացնելու դեպքում հնարավոր է 30-60 տոկոսով խնայել ջերմուցման ու հովացման ծախսերը: Նման բարձր ցուցանիշի հասնելու համար, սակայն, անհրաժեշտ է բոլոր բնակիչների համաձայնությունն ու ֆինանսական ներդրումը: Այս մասին լրագրողների հետ գրույցում հայտնել է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Հայկ Հարությունյանը: «Շենքերում շահառուների քանակն անհամեմատ շատ է, կան բազմաբնակարաններ, որոնք դատարկ են, կան բնակիչներ, որոնք չեն ուզում ոչ մի բանի համար վճարել, կան բնակիչներ, որոնք հնարավորություն չունեն, կան նաև բնակիչներ, որոնք ունեն ցանկություն ու հնարավորություն, բայց անհրաժեշտ է մյուսների համաձայնությունը ևս: Այսպես շահառու ունենալու դեպքում շատ դժվար է մեկ սկզբունքով աշխատող բիզնես մոդել գտնել ու մասսայական էներգամատչելիության միջոցառումներ իրականացնել», - ասել է Հայկ Հարությունյանը:

Բազմաբնակարան շենքերում էներգամատչելիության ծրագրերի իրագործմանը խոչընդոտող մեկ այլ գործոն է համատիրությունների կարողությունների բացակայությունը: Քաղաքաշինության կոմիտեն պատրաստում է համատիրությունների բարեփոխման օրենսդրական փաթեթ: «Այստեղ կարևոր են նաև

էներգետիկ ծառայություններ մատուցող մասվոր ընկերությունները, որոնք համատիրություններին ուղղություն կտան, ճիշտ ծրագրեր կկազմեն էներգետիկ աուդիտի արդյունքում», - ասել է փոխնախարարը:

Նա տեղեկացրել է նաև, որ մինչ այժմ դոնոր կազմակերպությունների աջակցությամբ մի շարք պիլոտային ծրագրեր են իրականացրել էներգամատչելիության ոլորտում և հստակ պատկերացնում են, թե արտաքին ջերմամեկուսացումը տնտեսական ինչ շահավերտություն ունի:

Մեկ բազմաբնակարան շենքի արտաքին մեկուսացումը կախված շենքի չափից, Հայկ Հարությունյանի խոսքով, պիլոտային ծրագրով կազմել է 40 մլն դրամ, բայց մասսայականացման դեպքում հնարավոր է մինչև կիսով չափ կրճատել ծախսերը: Միջին չափի 7-9 հարկանի պանելային շենքի արտաքին ջերմամեկուսացումը կարող է արժենալ 20 մլն դրամ: «Հայաստանում կա մոտ 20 հազար բազմաբնակարան շենք ու 450 հազար առանձնատուն: Շենքերի ջերմամեկուսացումն անհրաժեշտ է ոչ միայն էներգամատչելիության տեսանկյունից, այլև շինությունների կյանքը երկարացնելու, բնակիչների հարմարավետության բարձրացման տեսանկյունից», - նշել է Հայկ Հարությունյանը: ■

Աղբյուր՝ «Արմենպրես»

ԴԱՅԱԿ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԻՆ

Երեխայի խնամքի արձակուրդում գտնվող մայրերը, որոնք ցանկանում են աշխատանքի վերադառնալ, այսուհետ կարող են դայակ վարձել՝ պետությունից ստանալով փոխհատուցում մինչև երեխայի երկու տարին լրանալը: Դա նշանակում է, որ աշխատող մայրերին այլևս չի վճարվի ամսական 18 հազար դրամ նպաստը, որը տրվում է երեխայի խնամքի արձակուրդի ժամանակ: Փոխարենը պետությունը գումար կտրամադրի դայակի ծառայության դիմաց: «Պետությունը վճարելու է դայակի աշխատավարձի 50 տոկոսը: Այդ գումարը չպետք է գերազանցի նվազագույն աշխատավարձը: Այսինքն՝ եթե դայակի աշխատավարձը 110 հազար դրամ է, պետությունը վճարում է 55 հազար դրամը, մնացած գումարը վճարում է ծնողը», - նշել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը:

Հասանելիք գումարը տրամադրվելու է միայն դայակի և ծնողի միջև համապատասխան պայմանագրի առկայության դեպքում: Օրենքի նախագիծը հավասար հնարավորություններ է տալիս նաև ընտանիքի անդամներին, օրինակ սկեսորը, եթե առկա է դայակի վարձու աշխատանքի վերաբերյալ ձևակերպում:

Նախագիծը միանշանակ արձագանք չի ստացել ոլորտի մասնագետների



շրջանում: Դայակի ծառայություն մատուցող հարկատու գործակալությունները, որոնք դայակների հետ պայմանագրային հիմունքներով են աշխատում, որևէ խնդիր չեն տեսնում: Այլ է անհատ դայակների տեսակետը: Շատերի կարծիքով՝ սա ընդամենը քայլ է «որսալու» և հարկային դաշտ մտցնելու դայակներին, որոնք կազմակերպությունների և գործակալությունների աշխատակիցներ չեն համարվում: ■

Ա. ԱՆՏՈՆՅԱՆ



Սպիտակի երկրաշարժի տարելիցին

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունն ու ՊԵՆԱՆԱԿԱՆ կարմիր խաչը պայմանավորվել են 2018 թվականի դեկտեմբերի 7-ին Սպիտակի երկրաշարժի 30-րդ տարելիցին՝ աղետների ռիսկի նվազեցման ու դիմակայունության բարձրացման միջոցառումների շարքում Հայաստանում առաջին անգամ կազմակերպել դաշտային խոհանոցի միջազգային մրցույթ: Այս մասին առավել մանրամասն՝ առաջիկա համարներում:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍԸՆԹԱՅԻ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐԸ

Դեռևս այս տարվա հունիսին ենք տեղեկացրել, որ ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան, «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամն ու Գերմանական կարմիր խաչի Բադեն Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության երկրամասային դպրոցը մտադիր են շարունակել 2013 թվականին սկսված համագործակցությունը՝ ի նպաստ ԱԻՆ աղետների արձագանքման և ՃԿՊԱ կարողությունների հետագա զարգացման (911.«Արտակարգ թերթ» համար 21, 2017 թվական «Գերմանական չորրորդ դասընթացը ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում»): Այն ժամանակ Հայաստանում էր Գերմանական կարմիր խաչի Բադեն Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության երկրամասային դպրոցի դոցենտ-փորձագետ Վոլֆգանգ Շմիդտը, որը հանդիպումներ ունեցավ ԱԻ նախարար Դավիթ Տոնոյանի և ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ղեկավարության հետ:



տեմբերգի երկրամասային կազմակերպության երկրամասային դպրոցը: Կողմերը պարտավորվել են ակադեմիայում կազմակերպել «Խոսակցությունների վարում» և «Հեռախոսով առաջին օգնության տրամադրում» թեմաներով վերապատրաստման դասընթացներ «911» ծառայության կարգավոր-օպերատորների համար և այդ դասընթացների մեթոդաբանության ու բովանդակության վերաբերյալ դասընթաց ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի

դասախոսների համար, որպեսզի հետադարձ մեր մասնագետներն անցկացնեն կարգավոր-օպերատորների դասընթացները: Գերմանական կարմիր խաչի Բադեն Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության երկրամասային դպրոցի օգնությամբ մինչ օրս անցկացվել է վերապատրաստման երեք դասընթաց՝ ճգնաժամային կառավարման ոլորտի իրավական հիմունքներ, կենտրոնի տեխնիկական կառուցվածք, սթրես և սթրեսի հաղթահարում և այլ թեմաներով, մասնակցել է մոտ 100 մարդ: Նախնական պայմանավորվածության համաձայն, չորրորդ դասընթացը կանցկացվի 2018-ի գարնանը, կմասնակցի մոտ 30 մարդ՝ 10 հոգանոց երեք խումբ: Գերմանական դասընթացի ձևաչափը նույնն է՝ ոչ թե պարզ դասախոսություն, այլ՝ ինտերակտիվ շփում, կենդանի գրույց, հարցուպատասխան, գործնական վարժություններ:

Արամ ԶԱՔԱՐՅԱՆ

Հ.Գ. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունն ու Գերմանական կարմիր խաչը պայմանավորվել են 2018 թվականի դեկտեմբերի 7-ին Սպիտակի երկրաշարժի 30-րդ տարելիցին՝ աղետների ռիսկի նվազեցման ու դիմակայունության բարձրացման միջոցառումների շարքում Հայաստանում առաջին անգամ կազմակերպել դաշտային խոհանոցի միջազգային մրցույթ: Այս մասին առավել մանրամասն՝ առաջիկա համարներում:

ՀՐԵՑ-ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Հրդեհի տարամետրեր

Սկիզբը՝ նախորդ համարներում

Տևողություն

Հրդեհի զարգացումը, դա նրա պարամետրերի փոփոխությունն է ժամանակի և տարածության մեջ, հրդեհի առաջացման սկզբից մինչև վերացումը (մարումը):

Հրդեհը կարող է զարգանալ մինչև մարում և մարման ժամանակ:

T_h = T_{զարգ} + T_{մեկ} + T_{մար}
Որտեղ՝

T_h՝ հրդեհի տևողությունն է

T_{զարգ}՝ հրդեհի առաջացման սկիզբից մինչև առաջին մարման միջոցների մատուցումը (ազատ զարգացման ժամանակաշրջան)

T_{մեկ}՝ հրդեհի մեկուսացման տևողությունն է

T_{մար}՝ հրդեհի մարման տևողությունն է

Բեռնվածություն

Հրդեհային բեռնվածությունը (հրչեք բեռ) ջերմություն այն քանակն է, որը կարող է գոյանալ հրդեհի ժամանակ շենքի կամ շինության հատակի մեկ միավոր մակերեսից:

Հրդեհային բեռնվածությունը մշտական և ժամանակավոր հրդեհային բեռնվածության գումարն է: Մշտական բեռնվածության մեջ ներառում են շինարարական կառույցներում գտնվող նյութերը, որոնք ընդունակ են վառվել: Ժամանակավոր բեռնվածության մեջ ընդգրկվում են նյութեր, որոնք օգտագործվում են արտադրությունում, այդ թվում՝ տեխնոլոգիական և սանիտարատեխնիկական սարքավորումներ, մեկուսիչ նյութեր, նյութեր, որոնք գտնվում են պահեստներում (կահույք և այլն), որոնք կարող են վառվել: Որքան ավելի մեծ է բեռը, այնքան երկարատև է հրդեհը:

Մակերես

Հրդեհի մակերեսը այրման գոտու պրոյեկցիան է գետնի մակերեսի կամ տարած-

քի (սենյակի) հատակի վրա: Ուղղահայաց, փոքր հաստությամբ շինարարական կոնստրուկցիաների (պատեր, միջնապատեր), անտառանյութի դարսակների այրման դեպքում հրդեհի մակերեսը կարող է ընդունվել այրման մակերեսի պրոյեկցիան ուղղահայաց հարթության վրա: Եթե այրումը շենքի մի քանի հարկերում է, ապա հրդեհի ընդհանուր մակերեսը բոլոր հարկերում և ձեղնահարկում հրդեհի մակերեսների գումարն է: Կախված այրման առաջացման վայրից, այրվող նյութերի տեսակից, օբյեկտի ճարտարապետական, ծավալային նախագծման լուծումներից, կառուցատարերի բնութագրից, եղանակային պայմաններից և այլ գործոններից՝ հրդեհի մակերեսը կարող է լինել շրջանաձև, անկյունաձև և ուղղանկյունաձև: Այդպիսի բաժանումը պայմանական է և կիրառվում է հրդեհային մարտավարության խնդիրների լուծման հաշվարկները պարզեցնելու համար:

Շրջանաձև մակերեսով հրդեհները հանդիպում են, երբ հրդեհն առաջանում է առանց քամու տարածքում և մոտավորապես հավասար գծային արագությամբ բոլոր ուղղություններով (անտառանյութի պահեստներ, հացահատիկի զանգվածներ, մեծ մակերեսով ծածկեր և այլն):

Ուղղանկյունաձև մակերեսով հրդեհները հանդիպում են, երբ հրդեհն առաջանում է հրդեհային բեռով մեծ հատվածի սահմանին կամ կենտրոնում և տարածվում քամու ուղղությամբ (ցանկացած նշանակության և ձևի երկար շենքերում փոքր լայնությամբ և այլն):

Անկյունաձև մակերեսով հրդեհները հանդիպում են, երբ հրդեհն առաջանում է հրդեհային բեռով մեծ հատվածի սահմանին և տարածվում տարածքի անկյունի մերսում ցանկացած եղանակային պայմաններում: Այս ձևը կարող է տեղի ունենալ նույն օբյեկտներում, ուր տեղի են ունենում շրջանաձև մակերեսով հրդեհները: Հրդեհային



մակերեսի առավելագույն անկյունը կախված է հրդեհային բեռով տարածքի, հատվածի երկրաչափական ձևից և այրման առաջացման վայրից:

Պարագիծ

Հրդեհի պարագիծը հրդեհի մակերեսի արտաքին սահմանի երկարությունն է: Պարագիծը կարևոր նշանակություն ունի խոշոր չափերի զարգացած հրդեհի վայրում իրավիճակի գնահատման համար, երբ այդ պահին անբողջ մակերեսով հրդեհի մարման համար ուժերի և միջոցների քանակը բավարար չէ:

Ճակատ

Հրդեհի ճակատը հրդեհի պարագծի այն մասն է, որի ուղղությամբ տարածվում է կրակը: Այս պարամետրն ունի հատուկ նշանակություն հրդեհի վայրում իրավիճակի գնահատման, հիմնական գործողությունների վճռորոշ ուղղության որոշման և ուժերի ու միջոցների հաշվարկման համար:

Ավագ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի դասախոս

Չամրակառված ակնթարթներ

Երբ վարորդը 80 կմ/ժամ արագությամբ բախվում է անշարժ արգելքի, հարվածից 0,026 վրկ անց հարվածի ուժը 30-ապատիկ անգամ գերազանցում է մեքենայի ընդհանուր քաշը, ինչի հետևանքով ամրագոտի չկապած վարորդն ու ուղևորներն առաջ են մղվում 80 կմ/ժամ արագությամբ: 0,039 վրկ անց վարորդը մատարանի հետ մեկտեղ 15 սմ առաջ է մղվում, իսկ 0,044 վրկ հետո կրծքավանդակով խփվում է դեկին: Բախումից 0,050 վրկ անց արագությունը նվազում է, ինչի հետևանքով ուղևորների վրա ազդում է սեփական քաշը 80 անգամ գերազանցող ուժ: 0,068 վրկ անց վարորդը 9 տ քաշ ունեցող



ուժով բախվում է ցուցիչների վահանակին: 0,092 վրկ անց վարորդն ու առջևի մատուցող ուղևորը գլխով հարվածում են դիմապակույն և զանգուսկրի մահացու վնասվածք ստանում: 0,100 վրկ անց վարորդը մահացու վնասվածքներով հետ է շարժվում: 0,110 վրկ անց մեքենան թեթևակի հետ է գնում: Վարորդի հետևում մատուցող ուղևորը, եթե չի կապել ամրագոտին, հավասարվում է վարորդին ու ևս մեկ մահացու հարված հասցնում նրան՝ միաժամանակ հարվածից ինքը ստանում վնասվածք:

50 կմ/ժամ արագությամբ անշարժ արգելքի բախվելու դեպքում 80 կգ քաշ ունեցող մարդու վրա ազդում է 2 տ ուժով հարված, իսկ երեխաների դեպքում՝ 500 կգ:

Փրկարարները զգուշացնում են՝ ամրագոտին ձեռք անվտանգության լավագույն երաշխիքն է:



Կյանքը ինչպէս որ է

Անտեսանելի մենք տեսնում ենք այնքանով, որքանով մաքուր է մեր սիրտը, իսկ սիրտը մաքուր է այնքանով, որքանով մենք այն հղկել ենք:

հունական

WOLF

8

Օգնում են փրկարարները

Կորած արշավախումբը

Անցած յոթ օրում 33 ԱԻՆ փրկարար ծառայության ստորաբաժանումները արտակարգ իրավիճակների վերաբերյալ ավելի քան 200 ահազանգի են արձագանքել: Շատ դեպքերում փրկարարները դեպքի վայր մեկնելուն զուգահեռ տեղեկությունը փոխանցել են այլ ծառայության. շտապօգնություն, «Վեոլիա Ջուր», էլցանց, գազի վթարային ծառայություն, կանաչապատման, սանմաքրման ծառայություն, ոստիկանություն և այլն:

Գրանցվել է 30 հրդեհ. այրվել են տան գույք, շինությունների փայտյա կառուցատարրեր, շինանյութ, անասնակեր, բուսածածկ տարածքներ, ջերմահարվել են պողպատու և դեկորատիվ ծառեր: Փակ դուռ բացելու վերաբերյալ էլ 70 կանչ է ստացվել: Վատառողջ, ծանրաբաշ, սակավաշարժ քաղաքացուն բնակարանից իջեցնելու, բնակարան բարձրացնելու կամ բնակարանում տեղից տեղ տեղափոխելու կանչեր են սպասարկել Երևանի Էրեբունի, Արաբկիր, Կենտրոն, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների և Լոռու փրկարարները: Տարբեր վայրերում արգելափակված (դիտահոր, վերելակի հորան, նկուղ, տանիք, շենքի օդատար-ծխատար, մեքենայի շարժիչի տակ և այլն) մի շարք կենդանիներ են ազատվել: 1 օձ է հայտնաբերվել և տեղափոխվել անվ-



տանգ տարածք: Տարբեր տարածքներում արգելափակված մի շարք մեքենաներ են դուրս բերվել երթևեկելի հատված:

Այլ կանչեր. Վայոց ձորի փրկարարներն ահազանգ են ստացել, թե 3օրս գյուղի ջրամբարի վերևի լեռներում արշավախումբ է մոլորվել: Ահազանգը ստանալուց երեք ժամ անց փրկարարները նշված տեղանքում հայտնաբերել են 12 հոգանոց արշավախմբին, անվտանգ իջեցրել 3օրս գյուղ, որտեղից խումբն իր ավտոմեքենայով ուղևորվել է Երևան: Տավուշի փրկարարները կենդանի ահազանգ են ստացել, թե Իջևան-Նոյեմբերյան ավտոճանապարհին բեռնատար ավտոմեքենայի կցորդը պոկվել-առանձնացել է, ճանապարհը դարձել է միակողմանի երթևեկելի: 3րդեջ-փրկարարները բարձրացրել և ամրացրել են կցորդը, ճանապարհը դարձել է երկկողմանի երթևեկելի: ■

ՋՐԸՆԳ ՄԵՔՆԱՆԵՐ՝ ԳԼԵՆԴԵԼԻՑ

Մեկ ամիս առաջ 33 ԱԻՆ մախարար Դավիթ Տոնոյանի և ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի Գլենդել քաղաքի քաղաքապետ Վարդան Կարապետյանի ու Գլենդելի հրշեջ դեպարտամենտի ղեկավար Գրեգ Ֆիշի մի համագործակցային հարցեր: Պայմանավորվածություն էր ձեռք բերվել որպես նվիրատվություն մախարարությանը երկու հրշեջ մեքենա, փրկարարական հանդերձանք և պատգարակներ հատկացնելու մասին:



Նոյեմբերի 8-ին մեքենաներն ու գույքը հանձնվեց մախարարությանը: Մեքենաները ամերիկյան արտադրության են՝ Pierce մակնիշի, յուրաքանչյուրը՝ 2 տ ջրատարողությամբ, պարամեդիկական և հրշեջ-փրկարարական բլոկով, հագեցած երկնյուղ և եռանյուղ փողրակներով: ■

Չարգանք բժշկին

Հայաստանում բժիշկ-պացիենտ հարաբերությունները հաճախ են վերածվում ծեծի: Վերջին շաբաթում երկու նման պատմություն է գրանցվել: Մի դեպքում պացիենտն է իր տանը ձեռք բարձրացրել շտապօգնության բժշկի վրա, մյուս դեպքում հիվանդի հարազատներն են բուժկենտրոնում բռնուցքի դիմել: Շտապօգնության բժիշկները դժգոհում են կանչից րոպեներ անց էլ տեղում լինեն, մեկ է վայրկյաններ հաշվող պացիենտները սրտնեղում են, վեճ ու կռիվ սարքում:



2014-2015 թվականներին բժիշկ-պացիենտ բախումներով ամենառեկորդայինը Գյումրին էր: Գրեթե ամեն օր կարելի էր լսել վեճ ու ընդհարման մասին ծեծից մինչև ծեծելով սպանություն, և ավելի հաճախ բռնուցքների են դիմում ծննդկանների հարազատները: Այսօր որ բժշկին էլ հարցնեք, այս կամ այն տեսքով խոչընդոտում է եղել իր աշխատանքին: 3օրս գյուղի 19-ի կառավարության միտումնաքաղցր դեպքերը շատացել են, օրենքը պետք է խստացնել: Գործադիրն առաջարկում է 33 քրեական օրենսգրքում նոր լրացում անել՝ քրեականացնել բուժաշխատողի գործունեությունը: Օրենքը խստացվում է: Մասնագիտական պարտքը կատարող բժշկի հանդեպ բռնությունը կատարվի: Օրենսգրքի 130-րդ հոդվածում առաջարկվում է հետևյալ ձևակերպումը. բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձանց կամ բուժաշխատողների գործունեությունը: ■

նր խոչընդոտելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով: Նույն արարքը, որը կատարվել է բուժաշխատողի նկատմամբ բռնություն գործարդելով կամ դա գործարդելու սպառնալիքով պատժվում է ազատազրկմամբ 3-7 տարի ժամկետով: Օրենքի լրացումները միտված են բժիշկների իրավունքների պաշտպանությանը: Առաջարկը շուտով կքննարկվի Ազգային ժողովում: Բժիշկ-պացիենտ-հարազատ հարաբերություններում կգործեն էթիկայի նոր կանոններ: Իսկ սա արդեն առողջապահության մախարարությունում մշակվող հաջող օրինագծով: Հաճախ է պատահում, որ քաղաքացին անձոր մենակությունից շտապօգնություն կամ 911 է զանգում: Իսկ ի՞նչ է արվում նման դեպքերում. միայնակները պատասխանում են ոչինչ: Առայժմ ոչինչ: Սպասե՛ք: Նոր օրինագիծը, կարծես, այս հարցի պատասխանն էլ է տալու: ■

Էդուարդ ԱՐԱՄՅԱՆ

Իմացի՛ր և օգնի՛ր

ԱՂԱՔԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ. Այրվածքներ. Կանխարգելում

Մարդու ամենօրյա գործունեության ընթացքում հաճախ են հանդիպում տարբեր տեսակի և աստիճանի այրվածքներ: Այրվածքները կարող են վարակի, ջրազրկման, շոկի պատճառ դառնալ, դրանք շատ ցավոտ են, հաճախ հաշմող և այլանդակող՝ ապաքինումից հետո կուպիտ սպի է մնում: Այրվածքը բարձր ջերմաստիճանի, որոշ քիմիական նյութերի, էլեկտրականության կամ ճառագայթման հետևանքով մաշկի և մարմնի այլ հյուսվածքների վնասումն է: Այրվածքի հետևանքով կարող է դժվարանալ տուժածի շնչառությունը:



տեղակայմամբ, տուժածի տարիքով, առողջական վիճակով: Սակայն անգամ մակերեսային այրվածքը վտանգավոր է կյանքի համար: Այրվածքները կարելի է կանխել՝ հետևելով պարզ մախարարական միջոցառումների: Բոլոր դեպքերում այրվածքը պահանջում է անհապաղ մասնագիտական բուժօգնություն:

- Տնային ջեռուցիչներն օգտագործել նվազեցված ռեժիմով, ջուրը շատ մի՛ տաքացրեք:
- Մի՛ թողեք փոքր երեխաներին առանց հսկողության լոգարանում, խոհանոցում կամ այն վայրերում, ուր միացված ջեռուցիչներ կան:
- Սալօջախի վրա կաթսաների բռնակները դարձրեք այնպես, որ երեխաները չկարողանան դրանց հասնել:
- Էլեկտրական սարքավորումների լարերը ծալեք կամ փաթաթեք:
- Քայքայիչ նյութերի սրվակների վրա ունեցեք նախազգուշական պիտակներ: Քիմիական նյութերը պահեք երեխաներից հեռու:
- Զգույշ վարվեք կրակի հետ: Մի՛ թողեք երեխաներին խաղալ լուցկու, գազայինների և կրակի այլ աղբյուրների հետ: Մի՛ ծխեք անկողնում: ■

Այրվածքները լինում են ջերմային, քիմիական, էլեկտրական, ճառագայթային: Իսկ ըստ խորության՝ մակերեսային, մասամբ թափանցող, խոր թափանցող: Մակերեսային այրվածքի դեպքում վնասվում է մաշկի վերին շերտը: Այս այրվածքների ապաքինումից հետո սպիեր չեն առաջանում: Մասամբ թափանցող այրվածքի դեպքում վնասվում են մաշկի երկու շերտերը, առաջանում են հեղուկով լցված բշտեր, որոնք կարող են բացվել, և մաշկը խոնավանալ: Այս այրվածքների ապաքինումից հետո հնարավոր է սպիերի առաջացում: Խոր թափանցող այրվածքի դեպքում վնասվում են մաշկը և խորանիստ հյուսվածքները, արյունատար անոթները: Այս այրվածքները սաստիկ ցավոտ են, և դրանց ապաքինումից հետո առաջանում են կուպիտ սպիեր: Միշտ չէ, որ այրվածք ստանալուց անմիջապես հետո հաջողվում է որոշել այրվածքի ծանրությունը: Այրվածքի ծանրությունը պայմանավորված է այրվածքի խորությանը, մակերեսով, մարմնի վրա

Բաժանորդագրություն 2018

ՄԵՐ ԹԵՐԹԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԻ ՀԱՍԱՐԸ՝

33 ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա

ՀԿՀՀ 02500731

Աճառյան 1, «Արարատբանկ» ԲԲԸ Հ/Հ 1510002970030100

Տարեկան բաժանորդագրության գումարը՝ 6720 դրամ:

Այլ մանրամասների համար զանգահարել՝ (060) 69 10 00 (ներքին՝ 207)